

ԴԱԽԻԹ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼԱԻԿԱՅ ՈՐԴԻ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ

Է.

Դաւիթ վարդապետը խմբագրել է 98 կանոն, ինչպէս երեւում է, նա ունեցել է ձեռքի տակ եկեղեցական կանոնագրքերն և աւանդութիւնները: Ստրկական հետևողութիւն իւր աղբիւրներին չէ ունեցել. գործի բնաւորութիւնն էլ այդ էր պահանջում. նա կոչուած էր իւր սանին, Արքայութիւն քահանային, մատչելի, կամ ինչպէս Վարդանն է ասում, «գիւրանաս» կացուցանել եկեղեցու կանոններն. այդ պատճառով է, որ ստիպուած է շատ տեղ բացատրութիւններ և խրատներ գրել:

Դաւթի «կանոնական օրինադրութիւնների» մի օրինակը գտնւում էր Մայր Աթոռի մատենադարանի Թ. 739 (Թ. 5) ձեռագրի մէջ, որի վերնագիրն է «Կանոնագիրք առաքելոց և հարց սրբոց». ձեռագիրն յիշատակարան չունի, պարունակում է 34 կանոնական գրուած 7 զանազան ժողովների և հայրերի. ԺԹ. տեղումն է կանոնը Ներսէսի և Ներշապուոյ Մամիկոնէից. Ի. ս. Սահակայ հայոց հայրապետի, ԻԱ. Երանելոյն Յովհաննու իմաստասիրի, ԻԲ. Տ. Սիօնի Հայոց կաթողիկոսի. ԻԵ. սրբոցն կաթողիկոսաց հայոց և այլ հոգեշնորհ վարդապետաց կանոնը և խրատը զգուշաւորք ի խրատ քահանայից. ԻԶ. տեղումն է Դաւիթ վարդապետ, Ալաւկայ որդի. ԻԷ. Ճառք և կանոնը առաքելոց ՇԳ. կանոնը Աւագ Հայոց, ԼԴ. Յոհան Մանդակունւոյ կանոնը (Թերի):

Դաւթի ժողովածուն ունի երկու վերտառութիւն. «Դաւիթ վարդապետ Ալաւկայ որդի, որ գրեաց զկանոնական օրինադրութիւնս գեղեցկայարմարս և պիտանացուս ի խնդրոյ քահանայի միոջ, որում անուն էր Արքայութիւն ի քաղաքէն Գանձակայ» նոյնը կրկնւում է վերջում ՂԸ. կանոնից յետոյ: Ինչպէս տեսանք կանոնների մասին նոյն բառերով է աւանդել մեզ և Նիրակոս Գանձակեցին. Թուի Թէ վերտառութիւնը Դաւթի գրչից ելած չէ, որովհետև հազիւ Թէ նա իրեն ներէր գրել «գեղեցկայարմարս և

պիտանացու» իւր կանոնների ճակատին. այդ համապատասխան չէր լինիր հին վարդապետների ընաւորեալ համեստութեանը: Դաւթի կանոնները մինչև օրս տպուած չեն: Մեզ յայտնի չէ թէ բազմադիրն Մ. Վ. Չամչեան ո՛րպիսի օրինակ է ունեցել իւր ձեռի տակ, որ Դաւթի կանոնների համար այսպէս է գրում (Պտմ. Գ. 41) «Սա, ասում է, ի խնդրոյ համբալ քահանայի միոյ, որում անուն էր Արքայութիւն, արար կանոնական բանս ինչ Ղէ. համարով ի վերայ խտրութեանց և այլոց իրաց խառն ի խուռն ունով և անիմաստ բանիւք և եղ զայն ի կանոնագիրս Յովհաննու Իմաստասիրի, յորս յաւել և զայլ բազում ինչ անպիտան. և օրինակողը նորա հետզհետէ յաւելին ինչ ինչ բարի և չար, թողեալ ի բաց և զյուրվս ի պիտանեաց»: Ս. Սոմայ (և նորա թարգմանիչ գերմանացի Կ. Նէյման) գրէթէ նոյնն է կրկնում, այն տարբերութեամբ, որ կանոնների թիւն յիշում է 95, և ասում է որ Դաւթի մականունն էր Ապար (Apar)¹⁾: Յ. Վ. Զարբանաւեան²⁾ Դաւթի կանոնների մասին գրում է թէ «Մեր ձեռքը հասած 97 կամ 98 կանոններն ասոնց (Կիրակոսի և Վարդանի) դատաստանը չեն արդարացիներ»: Իսկ Հ. Յակ. Վ. Տաշեան, նկարագրելով Վիկենայի հայոց մատենադարանի ձեռագրներից մէկը³⁾, դնում է Դաւթի կանոնների վերնագիրն «Հարցումն պէսպէս խոստովանութեամբ բանից» կայրն և բ. ու գ. կանոնների սկզբնաւորութիւններն և ասում է «Հատածք Գ, մեծ մասամբ խենթական բաներ»:

Քննել բոլոր այս կարծիքներն առ այժմ անտեղի է, որովհետև Դաւթի կանոնների ընագիրն ամբողջապէս ուսումնասիրելու համար կարևոր է մի բաղդատական հրատարակութիւն ընտիր ձեռագրների: Որքան մենք հասկանում ենք, յիշեալ բանասէրներն իրենց ձեռքի տակ մի մի ձեռագիր են ունեցել, այն էլ գուցէ պակասաւոր: Մայր Աթոռի թ. 739 ձեռագիրը, որից ընդօրինակւած է և մերը, ընտիր օրինակ է. բայց այլ աւելի լաւ օրինակների մենք պատահած չենք և համեմատութիւններ անելու պատեհութիւն չենք ունեցել. այնպէս որ մեր վստահութիւնը միայն մի օրինակի վրայ է մնում, որի քաղուածքներն արդէն յառաջ բերւեցան⁴⁾:

1) S. Quadro della storia etc. Ven. 1829 եր. 90. Versuch c. gesch. d. Arm. Lrt. Leip. 1836, եր. 163.

2) Պտմ. Դպր. Ա. 535.

3) Յուլ. Վ. Միւ. Մատ. 656.

4) Մեր ձեռքի տակ եղած գրչեայ օրինակներում կան այսպիսի տարբեր ընթերցումներ՝ Տաճիկ, Բուրդ, քուրդագեն, թուրքագեն, քրդամորթ, նաւ, գուր, գիւճ (գոճոց), տախտակ կամ

Դաւթի ժողովածուն նոյն ժԲ. դարում պէտք է գործածու-
թեան մէջ եղած լինէր: Այդ երևում է, այն հանգամանքից, որ
Մխիթար Գոշի Դատաստանագրքի մէջ կան կանոններ, որոնք բա-
նացի Դաւթի կանոններից են արտագրուած: Մխիթար (1213 թ.)
իւր ժողովածուն կազմել սկսեց 1184 թուին, ուրեմն Դաւթի մա-
հից 44 տարի յետոյ: Պատահական չէ անշուշտ այդ երևոյթը: Ու-
րիշ աղբիւրների հետ միասին Մխիթար ձեռքի տակ ունեցել է և
Դաւթի կանոնագիրքը, որի մասին ինքը ոչ մի յիշատակութիւն
չի անում այն պատճառաւ, որ առհասարակ ոչ ոքի անուն չի յի-
շում (տ. նախադրութիւն ժ.): Համեմատութեան համար բաւական
ենք համարում ղնել այստեղ Դաւթի երկու կանոնները ԻԱ. «վա-
սըն գողոց ի փայտ հանելոյ» և ԻԲ.՝ «վասն ջորւոյն որ հարկանէ
զմարդն և մեռանի»:

Դ Ա Ի Ի Թ

Այլ որ վասն գողոց ի փայտ
հանելոյ է հարցումն, եթէ Գուրդ
իցէ և եթէ Հայ, և Հայ մարդոյ
հրամայեցեն զայն ի վերևի փայ-
տըն քարշել, եթէ հնար իցէ խոյս
տայցէ ի տեղւոյն, ապա թէ ոչ
կաշառով զերծցի. իսկ եթէ այ-
սոքիկ ոչ օգնեսցեն ապա զհրա-
մայեալն հարկաւորաբար այլ ոչ
առաւելութեամբ որպէս և հրա-
մայէ Յովհաննէս զինւորացն մի
աւելի քան զհրամայեալն առ-
նիցէք, քանզի Աստուած ի սիր-
տըն հայի և մարդ յերեսս, որ-
պէս և հրամայեաց Տէր Մովսէ-
սի»:

(Դաւ. ԻԱ.)

Դ Ա Ի Ի Թ

«Այլ եթէ լինիցի մարդոյ ջո-
րի խեղական և կամ ձի կիցսըն-
կէց կամ մարդակեր, որպէս և
զուարակազուրի ձին Աղեքսան-

Մ Խ Ի Թ Ա Ր Գ Օ Շ

«Այլ վասն գողոց ի փայտ հա-
նելոյ էիր հարցեալ: Եթէ այլադ-
գի իցէ և եթէ քրիստոնեայ և
քրիստոնէի հրամայեցեն ի փայտ
քարշել, եթէ հնար իցէ, խոյս
տացեն ի տեղւոյն, ապա թէ
ոչ—կաշառով զերծցի: Իսկ եթէ
այսոքիկ ոչ օգնեսցեն, ապա ըզ-
հրամայեալն ի տէրանցն հար-
կաւորաբար պարտ է կատարել,
այլ ոչ առաւելութեամբ որպէս
հրամայէ Յովհաննէս զինւորացն
մի աւելի քան զհրամայեալն
ձեզ առնիցէք, քանզի Աստուած
ի սիրտ հայի և մարդ յերեսս,
որպէս հրամայեաց Տէր Մամու-
էլի»:

(ԳՕՇ ՄԽԻԹ. Բ. ՃԹ)

(Մ Խ Ի Թ Ա Ր Գ Օ Շ)

«Այլ եթէ մարդոյ լինիցի ջո-
րի խեղական և ձի կիցսընկէց
կամ մարդակեր, որպէս զուա-
րակազուրի ձին Աղեքսանդրի

կոչկոռ և այլն: Համեմատէ նաև ձգ, ձէ, և ձը կանոններն Հ. Ալի-
շանի յիշած հատուածների հետ Հին Հաւատք (եր. 368—371):

զրի, և կամ եղն հարկանող, և նա գիտիցէ և այլք ազդ առնեն նմա և բողոք բառնայցեն և ըզվնասն ցուցանեն և նա անհոգս կացցէ և ոչ հնարիցէ զնոսա որպէս արժանն է. և կիցս ընկեցեալ և ատամնափորձեալ և կամ հարեալ սպանանիցէ զոք, տէրն նորա մահապարտ է, անասունն սպանցի. ապա թէ ոչ գիտէր, անպարտ է, եթէ յանսուրբ անասնոց իցէ, եթէ ձի իցէ, եթէ ջորի, ի մեռելոյն տէրքն տայցեն, զի ի պէտս հոգւոյ նորա ծախեսցին»

(ԴԱԽ. ԻԲ)

և կամ եղն հարկանող, և նա գիտիցէ, և այլք ազդ առնիցեն նմա և բողոք բառնայցեն և ըզվնասն ցուցանիցեն և նա յանհոգս կացցէ և ոչ հնարեսցէ ըզնոսա որպէս արժանն էր և կիցըս ընկեցեալ կամ ատամնացեալ կամ հարեալ սպանանիցէ զոք, տէր նորա մահապարտ է և անասունն սպանցի. Ապա թէ ոչ գտէր, անպարտ է. եթէ յանսուրբ անասնոց իցէ, թէ ձի թէ ջորի ի մեռելոցն, տեարքն տայցեն զի ի պէտս հոգւոց նոցա ծախիցեն. Սակայն յայտնիցեն զպատճառն և այնոցիկ վաճառիցեն որ կարող են խրատել ըզնոսա: Եւ զայս դատաստան եղաք երբեմն ըստ օրինացն այլ հաստատել և կանոնօք կամեցաք մասամբ, առաւելեալ»:

(ԳՕԾ ՄԽ. Բ. ԶԺ)

ԻԱ. կանոնի բաղդատութիւնից երևում է, որ Դաւիթ վարդապետն այդ տեղ էլ խարութիւն է դնում ազգութեան մէջ, և աչքի առաջ ունի Հային ու Քրդին, մինչդեռ Մխիթար ընդհանրացնում է միտքն և դնում է քրիստոնեայ և այլազգի Միւս տարբերութիւններն էական չեն: ԻԲ. կանոնի վերջում Մխիթար արել է իւր սովորական յաւելումը, ինչպէս տեսնում ենք համարեա նրա բոլոր կանոնների մէջ:

Աւելորդ ենք համարում մէջ բերել միւս կանոնների համեմատութիւնը միմիայն կրկնութիւններից խուսափելու մտքով: Վարկար է սակայն դնել այստեղ Դաւթի Ժէ կանոնից մի քաղաածք, որ գրէթէ ըստ էութեան նոյնն է ինչ որ Մխիթարի նախադրութեան մէջ կայ (տ. Ը. 51):

Դ Ա Խ Ի Թ

Մ Խ Ի Թ Ա Ր

Այլ եթէ առ ոտն կոխել զխաչ կամ զնշան, կամ ծիր առնել Քրիստոսի և Մահմէտի, մի շուն ի գիրկս առնուլ և յեկեղեցի մը-

զկամ յեկեղեցի մտանելով ըզլոյս շիջուցանել, և կամ բերանով ի ջուր և ի ձէթ փչել, կամ խաչ ի գետնի նկարել և կոխել,

տանել, կամ ջուր կամ ձէթ ի կամ զշան զձետոյ ունել, կամ բերանոյ ի բաց փչել, կամ ի ոսկր ի ձեռս առնուլ, կամ ի վերայ եկեղեցւոյ լուսոյ ջուր գետնի երկուս ծիրս առնել և ի փչել և կամ անցուցանել, կամ միոյ ի միւսն մտանել...»
 զձէթ շան բերանով ըմբռնել,
 կամ յանրան կենդանեաց, ստիպել ասել Զնա պաշտեմ։»

Թուի թէ Դաւթի Ժէ կանոնի խմբագրութիւնը կամ ընդօրինակումը պակասաւոր է. այդ երևում էր համեմատութիւնից Մխիթարի խօսքերի հետ. ահա թէ ինչ արարողութիւններ են յիշում.

1. Գետնի վրայ խաչ նկարել և կոխել. (Դաւ. և Մխիթ.)
 2. Երկու ծիր անել, մէկը Քրիստոսի և միւս Մահմէտի (և մէկից միւսն անցնել). (Դաւ. և Մխիթ.)
 3. Շան պոչը բռնել (բերանով) (Դաւ. և Մխիթ.)
 4. Բերանով ջուր կամ ձէթ փչել (բերանով ջրին կամ ձէթին փչել) (Դաւ. և Մխիթ.)
 5. Կունը գրկել և եկեղեցի մտնել (Դաւ.)
 6. Եկեղեցու ճրագն հանգցնել, ջուր փչելով (Դաւ.)
 7. Ասել Զնա պաշտեմ (Դաւ.)
 8. Եկեղեցի մտնել և լոյսն հանգցնել (Մխիթ. տ. և 5)
 9. Զեռը ոսկոր առնել (Մխիթ.)
- 8 և 9 կէտերը պակաս են Դաւթի ձեռագրի մէջ, իսկ 5, 6, և 7 պակաս են եղել, երևի, այն ձեռագրի մէջ, որից Մխիթար օգտուել է։ Այսպէս թէ այնպէս՝ ակներև է, որ Դատաստանագրքի խօսքերը քաղուած են Դաւթի կանոններից։ Այդ 9 կէտը վերաբերում է երգման արարողութիւններին, երբ այլազգին պահանջում է քրիստոնէից վկայութիւն։ ԺԲ դարում երեք տեսակ երգումն է եղել. «վկայական», «ուրացական» և «խոստովանական». առաջին դէպքում պէտք էր ասել «Աստուած վկայ». երկրորդ դէպքում պէտք էր ասել «ոչ Աստուած ուրացեալ է թէ հանց է» (այժմ կասէինք «Աստուած ինձ պատժէ թէ այդպէս է»). երրորդ դէպքում՝ «Աստուծոյ (կամ խաչի) փառքն որ այսպէս է», «Աստուծոյ անունը (կամ խաչը) գիտենայ որ այսպէս է»։

Վերևը նշանակուած արարողութիւնները կատարում էին երկրորդ տեսակ երգման ժամանակ, ի հարկէ, ակամայ, երբ, ինչպէս Դաւիթ գրում է, հարկն ստիպում էր գերի ազատելու կամ կեանք, հոգի փրկելու։ Այդպիսի արարողութիւններով երգւող քահանան կամ աշխարհականն յետոյ պէտք է ծանր ապաշխարանք կրէր իւր ակամայ գործած մեղքը քաւելու համար։ Ինչ

ծագումն ունին այդ արարողութիւնները, որք շատ տարօրինակ են, տեղակա՞ն թէ օտար, քրիստոնէական թէ հեթանոսական կամ իսլամական, այդ կը մնայ ապագային պարզելու:

Վանոնական օրինադրութիւններին հարեանցի ծանօթութեան համար այսքանս թող առայժմ բաւական համարուի: Ակնհայտ է, որ Ալաւկայ որդու այդ գործն Հայոց զրականութեան մէջ իւր տեսակով առանձին մի բան է, գուցէ առաջինն ու միակը: Թէև յետագայ դարերում հանդէս եկած են Կիրակոս վարդապետի, Յովհան Երզնկացու և ուրիշների անունով զանազան համառօտ կամ ընդարձակ կանոնական խրատներ, սակայն այդպիսիները մեզ ծանօթացնում են հեղինակների ներքին աշխարհի հետ միայն առանց պատկերացնելու և արտաքին աշխարհն և այն կեանքը, որի համար գրում են: Գանձակեցի Դաւիթ վարդապետն, ընդհակառակը, կարծես, պարտք է համարում զարգացնել իւր աշակերտի դիտողական աչքը. նա ներկայացնում է կեանքն, ինչպէս կայ, ինչպէս ինքը տեսնում է այդ, և իւր կանոնները դնում է իւր աշակերտին ըմբռնելի երևոյթների դէմ: Այդ դիտողական նկարագիրն է, որ բարձրացնում է կանոնական օրինադրութիւնների արժէքը: Արտաքին արուեստով, անշուշտ, այդ գործը կարող չէ Ծնորհալու և Լամբրոնացու դարին յատուկ զրական արդիւնքներին հաւասարուել: Սակայն նորա պատմական նշանակութիւնն հէնց այն տեղ է, որ նա սերտ կապուած է իւր ծագման, միջավայրի, ներքին վիճակի և զարգացման պայմանների հետ և ճշգրիտ յայտարարն է նոցա: Նիւթի ճոխութիւնն ու բազմազանութիւնը և շօշափած հարցերի հետաքրքրութիւնը նկարագրի պարզութեան և բարձր ու կենդանութեան ու ժողովրդականութեան հետ միասին բաւական զբաւականներ են այդ ձեռնարկի շահեկանութեան: Ուստի կը մնայ միայն ցանկալ, որ ժամանակն ու հանգամանքները նպաստաւոր լինին ամբողջ բնագրի հրատարակութեանը՝ կարևոր և բազմակողմանի լուսաբանութիւններով հանդերձ: